ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՈՎՍԵՓ ԹՈՔԱԹԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՅՈՎՍԷՓ ԹՕՔԱԹ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ

Համայն մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարեպաշտ զաւակիդ:

Ցարգարժան պրն Յովսէփ Թօքաթ,

Գոհունակութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ ամերիկահայ համայնքի ազգային եւ եկեղեցական կեանքը աշխոյժ ու զօրեղ տեսնելու Ձեր նախանձախնդրութիւնը արդիւնաւորուել է բազում բարի իրագործումներով: Տարիներ շարունակ Դուք Ձեր կարողութիւնները, ժամանակը, նիւթական ու բարոյական աջակցութիւնը որդիական սիրով ի սպաս էք դնում յանուն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շինութեան ու պայծառութեան:

Ձեր նուիրումի պսակն են հանդիսանում Տիրախնամ թեմի Սուրբ Սարգիս եկեղեցուն բերած ծառայութիւնները, որոնք Ձեր անունը անքակտ կերպով կապեցին եկեղեցու պատմութեանը՝ որպէս բարեգործի: Հայորդուդ առ Աստուած հաւատի եւ ազգասէր ու եկեղեցասէր ոգու դրսեւորումն է նիւթական Ձեր մեծագումար նուիրատուութիւնը, որի շնորհիւ ամբողջապէս վերանորոգուած են եկեղեցու Խորանը, Սուրբ Սեղանն ու Մկրտութեան Աւազանը, իսկ մուտքը զարդարում է Հայրենիքից տարուած խաչքարը: Այսօր բազմաթիւ հաւատացեալներ, Ձեր հանդէպ սէրն ու յարգանքն իրենց հոգիներում, երախտագիտութեան ազնիւ զգացումով Բարձրեալի հանապազ հովանին են հայցում Ձեզ եւ Ձեր ընտանիքին, իրենց հաւատքի տունը՝ Սուրբ Սարգիս Եկեղեցին, գտնելով խնամքով ու գեղեցկօրէն բարեզարդուած:

Սիրով ընդառաջելով ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած մշտապէս հովանի եւ օգնական լինի Ձեզ, որպէսզի Դուք որդիական նոյն սիրով ու հաւատարմութեամբ շարունակէք Ձեր բարի

ծառայութիւնները ի պայծառութիւն Սուրբ Սարգիս եկեղեցու եւ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի՝ առաջնորդուելով «Նախանձ Տան քո կերիցէ զիս» (Յովհ. Բ 17) Տիրոջ սուրբ պատգամով:

Թող Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ Ձեզ եւ Ձեր ընտանիքի անդամներին պարգեւի քաջառողջ երկար կեանք, որպէսզի վայելէք Ձեր ազգօգուտ սպասաւորութեան եւ եկեղեցաշէն բարերարութեան ազնիւ պտուղները:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 2-ն Սեպտեմբերի
Յամի Տեառն 2004 եւ ի թուին Հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 255